



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 25» մարտի 2019 թ.

N 70 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼՈՒԻԿԻ ՀԱՐԱՎԱՄԵՐԻԿՅԱՆ ՑԵՑ
ՎՆԱՍԱՏՈՒԻ ՖԵՐՈՄՈՆԱՅԻՆ ԹԱԿԱՐԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի
դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման 5-րդ հավելվածի N 8 աղյուսակի.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում լուրիկի հարավամերիկյան ցեց
վնասատուի ֆերոմոնային թակարդների միջոցով մոնիթորինգի իրականացման ծրագիրը
(այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների
կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն)
տնօրեն Ն. Բարսեղյանին՝

1) «Բուսասանիտարիայի ծառայությունների մատուցում» ծրագրի շրջանակներում
2019 թվականի պետական բյուջեով նախատեսված ձեռք բերվող ֆերոմոնային
թակարդները հատկացնել Ծրագրի կատարմանը:

2) Ծրագրում ընդգրկված ագրոնոմներին հատկացնել լրացուցիչ գործարքային
աշխատավարձ «Բուսասանիտարիայի ծառայությունների մատուցում» ծրագրի
շրջանակներում 2019 թվականի բյուջեով նախատեսված լրացուցիչ 15 ագրոնոմի հաստիքի
համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ Ռ. Նազարյանին
և գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչության պետի
ժամանակավոր պաշտոնակատար Մ. Կարապետյանին Ծրագրի իրականացման
ընթացքում ապահովել մոնիթորինգի անցկացումը:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի
տեղակալ Գ. Պետրոսյանին:

Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ԾՐԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼՈՒԻԿԻ ՀԱՐԱՎԱՄԵՐԻԿՅԱՆ ՑԵՑ ՎՆԱՍԱՏՈՒԻ ՖԵՐՈՄՈՆԱՅԻՆ ԹԱԿԱՐԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում լուլիկի հարավամերիկյան ցեցն (այսուհետ՝ ցեց) առաջին անգամ հայտնաբերվել է 2012 թվականին Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարակերտ և Ղուկասավան համայնքներում:

2. Ցեցը սնվում է մորմազգի մշակաբույսերի տերևներով, պալարներով և պտուղներով, թիթեռների թռիչքը սկսվում է վաղ գարնանը և շարունակվում մինչև հոկտեմբերի վերջը:

3. Հողօգտագործողները չկարողանալով ճիշտ որոշել պայքարի միջոցառումների իրականացման ժամկետները ստիպված ավելացնում են քիմիական մշակումների քանակը, կատարում լրացուցիչ և անարդյունավետ ծախսեր, որոնց արդյունքում բարձրանում է արտադրանքի ինքնարժեքը, նվազում ստացվող եկամուտը:

4. Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) նախաձեռնությամբ 2013 թվականին տնտեսավարողների համար կազմակերպվել են ուսուցումներ, միջազգային փորձագետների մասնակցությամբ՝ խորհրդատվություններ, հրատարակվել՝ տեղեկատվական թերթիկներ, 2014-2015 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցներով ձեռք են բերվել ֆերոմոնային թակարդներ, որոնց միջոցով իրականացված դիտարկումների (մոնիթորինգ) հիման վրա տնտեսավարողներին տրամադրվել է խորհրդատվություն վնասատուի դեմ պայքարի իրականացման ժամկետների և առավել արդյունավետ պեստիցիդների տեսակների ու օգտագործման չափաքանակների վերաբերյալ:

5. 2018 թվականին կլիմայական պայմաններով պայմանավորված լուլիկի ցեցը մեծ վնաս է հասցրել լուլիկի դաշտերին:

6. Փորձը ցույց է տվել, որ վերոհիշյալ վնասատուի մոնիթորինգը և դրանց դեմ պայքարի միջոցառումների իրականացման ճիշտ ժամկետները հնարավոր է որոշել միայն համապատասխան ֆերոմոնային թակարդների օգտագործմամբ:

7. Կազմակերպությունը «Բուսասանիտարիայի ծառայությունների մատուցում» ծրագրի շրջանակներում ձեռքբերված ցեցի ֆերոմոնային թակարդների ու օժանդակ պարագաների օգնությամբ մոնիթորինգ կիրականացվի Հայաստանի Հանրապե-

տության մարզերի մորմազգի մշակաբույսերի դաշտերում: Անհրաժեշտ ֆերոմոնային թակարդների և օժանդակ պարագաների պահանջարկը հաշվարկելիս՝ հիմք են ընդունվել 2017-2018 թվականների մորմազգի մշակաբույսերի փաստացի ցանքատարածությունները և նախարարությունում անցկացված մասնագիտական քննարկումների արդյունքները:

8. 2019 թվականին հանրապետության բոլոր մարզերում կիրականացվի մոնիթորինգ՝ ֆերոմոնային թակարդների կիրառմամբ, տեղադրվող թակարդների բաշխումը ներկայացվում է N 1 աղյուսակում:

Աղյուսակ N 1

Ֆերոմոնային թակարդների տեղաբաշխումն, ըստ մարզերի

Մարզը	Կատարվել է ցանք (ՀՀ ԱՎԾ)				Ֆերոմոնային թակարդների թիվը	Կարտոֆիլ	Լոլիկ
	Լոլիկ		Կարտոֆիլ				
	2017	2018	2017	2018			
Արագածոտն	181	83	1382	1060	18	12	6
Արարատ	2560	2069	796	631	220	40	180
Արմավիր	2659	1850	1667	1418	220	40	180
Լոռի	87	82	4190	3596	12	10	2
Կոտայք	172	137	886	756	10	7	3
Շիրակ	78	36	3715	3221	12	12	0
Վայոց Ձոր	103	103	223	160	8	5	3
Ընդամենը	5840	4360	12859	10842	500	126	374

9. 2019 թվականի մայիս-սեպտեմբեր ժամանակահատվածում մորմազգի մշակաբույսերի (լոլիկ, կարտոֆիլ, սմբուկ, տաքդեղ և այլն) դաշտերում ցեցի թակարդներում ֆերոմոնով գլխիկները կփոխվեն 4, իսկ սոսնձաթղթերը՝ 9 անգամ:

10. Դաշտում ֆերոմոնային թակարդները կամրացվեն փայտից կամ պլաստիկ նյութից պատրաստված Դ-աձև, 65-70 սմ բարձրությամբ, սրածայր ցցերին:

11. Ծրագրի հաշվարկային գինը կազմում է 4000.0 հազ. դրամ, հաշվարկների համար հենք է հանդիսացել Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում գրանցված ֆերոմոնային թակարդների գների վերաբերյալ դրանց ներկրմամբ զբաղվող ընկերությունների կողմից հեռախոսակապով տրամադրված տեղեկատվությունը: Ցեցի ֆերոմոնային թակարդների և օժանդակ պարագաների արժեքները ներկայացվում է N 2 աղյուսակում:

Հաշվարկ

ՀՀ-ում լուիկի հարավամերիկյան ցեցի ֆերոմոնային թակարդների կիրառմամբ մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ ֆերոմոնային թակարդների և օժանդակ պարագաների (մրցութային գնման դեպքում)

Ապրանքի անվանումը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Քանակը, հատ	Արժեքը, ՀՀ դրամ
Թակարդը և լուիկի ցեցի ֆերոմոնով գլխիկը Tuta absoluta	2100	500	1050000
Լուիկի ցեցի ֆերոմոնով գլխիկը Tuta absoluta	1000	2000	2000000
Լրացուցիչ սոսնձաթուղթ (2 հատ)	300	2000	600000
Թակարդների ամրացման համար անհրաժեշտ ցցերը	700	500	350000
Ընդամենը			4000000

12. Տեղադրված ֆերոմոնային թակարդների պահպանությունը 2019 թվականի ամբողջ վեգետացիայի ընթացքում կիրականացվի հողօգտագործողների աջակցությամբ:

13. 2019 թվականի վեգետացիայի ընթացքում մոնիթորինգ իրականացնող մասնագետներն, ըստ անհրաժեշտության, խորհրդատվություն կտրամադրեն հողօգտագործողներին վնասատուների դեմ պայքարի միջոցառումների կազմակերպման ժամկետների, օգտագործվող բույսերի պաշտպանության միջոցների և դրանց չափաքանակների վերաբերյալ:

14. Մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ Կազմակերպության կողմից յուրաքանչյուր ամիս մինչև հաջորդող ամսվա 10-ը հաշվետվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

15. Ծրագրի մոնիթորինգը կիրականացնի նախարարության համապատասխան ստորաբաժանումը:

16. Ծրագրի իրականացման և հողօգտագործողների կողմից ագրոտեխնիկական համալիր միջոցառումների կատարման արդյունքում ակնկալվում է՝

- բերքի կորուստների նվազում,
- օգտագործվող բույսերի պաշտպանության միջոցների ծախսի կրճատում,
- արտադրվող բանջարեղենի ապրանքային տեսքի ու որակի բարելավում: